ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

2021թ. հունվարի 22-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 17 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր հինգ, աշխատանքի տեղավորման՝ ինը, տնամերձի սահմանների ճշտման, ռմբակոծությունից վնասված տանիքի վերանորոգման, պետպատվերի շրջանակներում աչքի վիրահատության խնդրով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմած հինգ քաղաքացիներից 3 քաղաքացիների դիմումներին տրվել է դրական լուծում, երկու դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են տնամերձի սահմանների ճշտման, ռմբակոծությունից վնասված տանիքի վերանորոգման, պետպատվերի շրջանակներում աչքի վիրահատության խնդրով՝ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարան